

« Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 15/3

25 ապրիլի 2012թ.

Քննարկվեց Ա/Ձ Բազրատ Մարությանի գանգատը « ԿԱ ՊԵԿ Վանաձորի ՏՀՏ 07.03.2012թ. թիվ 2108607 ստուգման ակտի դեմ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ « ԿԱ ՊԵԿ Վանաձորի ՏՀՏ պետի 27.02.2012թ. թիվ 2205477 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ Բազրատ Մարությանի մոտ կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում): Արդյունքում 01.03.2012թ-ին կազմվել է հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 2205477 արձանագրությունը, որում արձանագրվել է, որ հարկային տեսուչ Վաչագան Ժամհարյանի կողմից 01.03.2012թ. ժամը 14:25-ին ք.Վանաձոր, Տիգրան Մեծի 61 հասցեում գտնվող խանութից կատարվեց հսկիչ գնում 2000 դրամի չափով՝ 3 հատ ձայնասկավառակ, որի դիմաց վճարումը կատարվեց կանխիկ դրամով: Աշխատակից Շուշանիկ Գրիգորյանը գումարը չմուտքագրեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրեց: Ուսումնասիրությունն անցկացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները և ուսումնասիրության հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետ ժամը 14:34-ին ՀԴՄ-ից դուրս բերվեց <Z> հաշվետվություն՝ 250 դրամ ընդհանուր գումարով, որի մեջ ներառված չէր կատարված վճարման արժեքը: <Z> հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը՝ 2000 դրամը, ժամը 14:37-ին մուտքագրվեց ՀԴՄ, դուրս բերվեց կտրոն և ժամը 14:37-ին դուրս բերվեց <Z> հաշվետվությունը՝ 2000 դրամ ընդհանուր գումարով: Ուսումնասիրությամբ պարզվեց, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից խախտվել են « Կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները, որն առաջացնում է պատասխանատվություն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» « օրենքով սահմանված կարգով:

Հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ 01.03.2012թ-ի թիվ 2205477 արձանագրությունում արտացոլված տվյալները հիմք են հանդիսացել « ԿԱ ՊԵԿ Վանաձորի ՏՀՏ պետի 02.03.2012թ. թիվ 2108607 հանձնարարագրի հրապարակման և 07.03.2012թ. թիվ 2108607 ստուգման ակտի (այսուհետ նաև ստուգման ակտի) կազմման համար:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ հիմք ընդունելով Ա/Ձ Բազրատ Մարությանի մոտ « ԿԱ ՊԵԿ Վանաձորի ՏՀՏ պետի 27.02.2012թ. թիվ 2205477 հանձնարարագրով կատարված հսկիչ գնման ուսումնասիրության արդյունքում կազմված թիվ 2205477 արձանագրությունը, որով արձանագրվել է Ա/Ձ Բազրատ Մարությանի կողմից « Կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի պահանջների խախտման փաստը, և ղեկավարվելով «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման ու անցկացման մասին» « օրենքի ու «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» « օրենքի 10-րդ հոդվածի դրույթներով՝ տնտեսվարող սուբյեկտին «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» « օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով առաջադրվում է տուգանք 150 000 դրամի չափով:

Ա/Ձ Բազրատ Մարությանի գանգատում մասնավորապես նշված է.

Սույն թվականի մարտի 1-ին Վանաձորի ՏՀՏ-ի կողմից Տիգրան Մեծի 61/10 հասցեում գործունեություն իրականացնող ԱՁ Բազրատ Մարությանի մոտ հարկային

տեսուչ Վաչագան Ժամհարյանը կատարել է 3 հատ ձայնասկավառակի գնում՝ 2000 դրամ արժողությամբ: Գնումն իրականացնելուց հետո նրա գործընկեր՝ հարկային տեսուչ Արմեն Մխիթարյանը, մուտք է գործել խանութի սրահ և հայտարարել, որ տեղի է ունեցել հսկիչ-դրամարկղային մեքենայի շահագործման կանոնների խախտում և առաջարկել են ներկայանալ իրենց աշխատանքի վայր: Տեղի ունեցածի վերաբերյալ ինձ հայտնել է վաճառողուհին: Տեսուչները չեն փորձել կապվել ինձ հետ և ներկայացնել ստուգման հանձնարարագիրը:

Ըստ Վանաձորի ՏՀՏ-ի կազմած արձանագրության, 01.03.2012թ-ին թիվ 2205477 հանձնարարագրով կատարվել է հսկիչ գնում: Միաժամանակ ըստ նույն ՏՀՏ-ի 02.03.2012թ-ի թիվ 2108607 հանձնարարագրի և նույն համարի տակ ակտի նշվել է, որ իբր 02.03.2012թ-ից մինչև 07.03.2012թ-ը տեսուչներ՝ Արմեն Մխիթարյանը և Վաչագան Ժամհարյանը ԱՁ Բագրատ Մարությանի մոտ կատարել են ՀԴՄ կիրառման ճշտության ստուգում: Նման փաստ տեղի չի ունեցել: Իրականում ակտը գրվել է նախորդ հանձնարարագրով կազմված արձանագրության հիման վրա:

Տվյալ պարագայում գտնում եմ, որ առկա է գործող օրենսդրության խախտում, քանի որ իմ կողմից չընդունված հսկիչ գնման փաստի հիման վրա 01.03.2012թ-ին ակտ է կազմվում, որ իբր 02.03.2012թ-ից մինչև 07.03.2012թ ընկած ժամանակահատվածում տեսուչները կատարել են ստուգում, որը տեղի չի ունեցել, ինչպես նաև այլ խախտում չի արձանագրվել:

Հայտնում եմ նաև այն փաստը, որ 27.02.2012թ. թիվ 2205477 հանձնարարագրում գրված է Ա/Ձ Բագրատ Մարության, Լոռու մարզ, գյուղ Դիդավան, մինչդեռ Լոռու մարզում նման գյուղ առկա չէ: Անհասկանալի է նաև, որ թիվ 2205477 արձանագրությունում հարկային տեսուչ Արմեն Մխիթարյանի անձնական կողը գրված է թիվ 4458-ի տակ, իսկ 2108607 ակտում՝ 4854-ի տակ:

Հաշվի առնելով վերոհիշյալ փաստերը Ա/Ձ Բագրատ Մարությանը խնդրում է օրենքի խախտումներով կազմված թիվ 2108607 ակտը համարել անվավեր:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ուսումնասիրությունն և ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ստուգման ակտը կազմվել է <<<-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> ՀՀ օրենքի պահանջների խախտմամբ: Մասնավորապես, <<<-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն. <Ակտի նախագիծը ստուգում իրականացնող անձը 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին՝ առարկություններ ներկայացնելու նպատակով: Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը 5 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է ակտի նախագիծը: Սույն մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված ժամկետում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի կողմից առարկություններ չներկայացվելու դեպքում ստուգող մարմինը կազմում է ակտը և դրա մեկ օրինակը՝ ստորագրված ստուգում իրականացնող պաշտոնատար անձի կողմից, ժամկետի ավարտից հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացնում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին>:

Քննարկվող դեպքում ստուգման ակտի նախագիծը կազմվել է 02.03.2012թ-ին, իսկ ստուգման ակտը՝ 07.03.2012թ-ին: Այսինքն, ստուգման ակտը կազմվել է ոչ թե ստուգման ակտի նախագիծը կազմելու օրվանից 5 աշխատանքային օր, այլ 5 օրացուցային օր հետո:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. <Անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.>:

Միևնույն ժամանակ Հանձնաժողովի կողմից արձանագրվեցին նաև հետևյալ փաստերը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ Վանաձորի ՏՀՏ պետի 27.02.2012թ. թիվ 2205477 հանձնարարագրում, որի համաձայն Ա/Ձ Բազրատ Մարությանի մոտ կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում), Ա/Ձ Բազրատ Մարությանի հասցեն նշված է Լոռու մարզ, գյուղ Դիդավան, այն դեպքում, երբ Լոռու մարզում նման անվանումով գյուղ առկա չէ: Բացի այդ, հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 2205477 արձանագրությունում հարկային տեսուչ Արմեն Մխիթարյանի անձնական կողը նշված է թիվ 4458, իսկ ստուգման ակտի նախագծում և ստուգման ակտում՝ 4854:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ Վանաձորի ՏՀՏ 07.03.2012թ. թիվ 2108607 ստուգման ակտը:

Հանձնաժողովի նախագահ



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ